

Ց Ա Ն Կ

ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԵՊՔՈՒՄ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԻ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ

Հավելվածի համարը	Հավելվածի անվանումը	Էջի համարը
1	ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԽԵՄԱ	
2	ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՊԼԱՆ - ԺԱՄԱ ՆԱԿԱՑՈՒՅՑ	
3	ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԻ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՍԽԵՄԱ	
4	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՏՈՒԺԱԾ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՑ ԱՆՕԹԵՎԱՆ ՄՆԱՑԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԵՎ ԿԱՑԱՐԱՆՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՇՎԱՐԿ	
5	ՏՈՒԺԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ՝ ՄՆՆԴՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՇՎԱՐԿ	
6	ՏՈՒԺԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱԳՈՒՍՏՈՎ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՇՎԱՐԿ	
7	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ	
8	ՀԵՏԱԽՈՒՂՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԽԵՄԱ	
9	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՀԱՇՎԱՐԿ	
10	ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՊԱՏՎԱՐՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՓԼՈՒԶՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԱՂՅՈՒՍԱԿ	
11	ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒԺԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ	

Հավելված 4
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2016 թ. - ի
N որոշման

ՀՀ Հավելված 4
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2014 թ. մայիսի 22 - ի
N 96 - Ա որոշման

Պ Լ Ա Ն

ՋՐԱՄԲԱՐԻ ՊԱՏՎԱՐԻ ՓԼՈՒՋՄԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ԵՎ ՓԼՈՒՋՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

1. Իրավիճակի գնահատում և եզրակացություններ

Մարզում կա արհեստական պատվարով 2 ջրամբար «Գեղարքունիք 2», որի տարողությունը 320000մ³ է, պատվարի բարձրությունը 9մ, երկարությունը 20մ, հայելու մակերեսը կազմում է 6,0հա, նախագծային սեսմակայությունը 11 բալ, ծովի մակարդակից գտնվում է 2500մետր բարձրության վրա և «Լանջաղբյուր 2», որի տարողությունը 300000մ³ է, պատվարի բարձրությունը 7մ, երկարությունը 16մ, հայելու մակերեսը կազմում է 8,4հա, նախագծային սեսմակայությունը 11 բալ, ծովի մակարդակից գտնվում է 2500մետր բարձրության վրա:

Ջրամբարները ջրով լցված են լինում հունիսի կեսերից մինչև օգոստոս:

«Գեղարքունիք 2» ջրամբարի պատվարի փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում կհայտնվեն Գեղարքունիք, Լանջաղբյուր, Գանձակ, Կարմիրգյուղ, ք. Գավառ, և Նորատուա համայնքների գետամերձ տարածքները, կջրածածկվի մոտ 500 հա տարածք: Ջրածածկման գոտում կհայտնվի մոտ 6500 մարդ, մոտ 4800 գլուխ խոշոր ու 3500 գլուխ մանր եղջերավոր անասուններ: Կջրածածկվի մոտ 12 կմ ավտոճոնապարհներ, 32 հատ կամուրջներ: Ջրածածկման գոտում կհայտնվեն մոտ 6 կմ գազամուղ և մոտ 15կմ էլ. հաղորդման գծեր:

«Լանջաղբյուր 2» ջրամբարի պատվարի փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում կհայտնվեն Գեղարքունիք գյուղի գետամերձ տարածքների մոտ1/3 ը, Լանջաղբյուր, Գանձակ, Կարմիրգյուղ, ք. Գավառ, և Նորատուա Համայնքների գետամերձ տարածքները, կջրածածկվի մոտ 480 հա տարածք: Ջրածածկման գոտում կհայտնվի մոտ 6200 մարդ, մոտ 4500 գլուխ խոշոր ու 3200 գլուխ մանր եղջերավոր անասուններ: Կջրածածկվի մոտ 10 կմ

ավտոճոճնապարհներ, 25 հատ կամուրջներ: Ջրածածկման գոտում կհայտնվեն մոտ 4 կմ գազամուղ և մոտ 10 կմ էլ. Հաղորդման գծեր:

2. Ազդարարում

Ջրամբարի վթարից բնակչությանը սպառնացող վտանգի մասին ջրամբարի հսկիչը անմիջապես ահազանգում է ՄՓՎ ՃԿԿ:

Էլ. շչակների միջոցով տեղեկացվում է բնակչությանը սպառնացող վտանգի մասին: Շչակները միացվում են ՄՓՎ ՃԿԿ կրտսեր հրահանգչի հրահանգով ձեռքով միացման եղանակով: Ջրամբարների վթարից հնարավոր ջրածածկման գոտում գտնվող 6 համայնքներում առկա են C- 40 տիպի 8 էլ. շչակներ, էլ. շչակներով ազդարարման վերաբերյալ որոշումն ընդունում է մարզպետը կամ համայնքի ղեկավարը: Շչակային «ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻՆ» ազդանշանից հետո հեռուստատեսության, ռադիոցանցի կամ բարձրախոսի միջոցով տրվում է տեքստային հաղորդում ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի կամ փլուզման վերաբերյալ: Ստանալով մարզի տարածքում արտակարգ իրավիճակի մասին տեղեկատվությունը ՄՓՎ ՃԿԿ կրտսեր հրահանգիչը այն հաղորդում է ՃԿԱԿ, ՄՓՎ պետին և նրա հրահանգով իրականացնում է ՄՓՎ անձնակազմի հավաք: ՄՓՎ պետը իրավիճակի մասին զեկուցում է Մարզպետին, և նրա հրահանգով՝ ՄՓՎ կողմից իրականացվում է մարզի ղեկավար կազմի, արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովի անդամների, համայնքների ղեկավարների և տարահանման հանձնաժողովի նախագահի ազդարարումը՝ համագործակցելով «Արմենտել» ՀՁ մարզային ստորաբաժանումների հետ: Ազդարարման համակարգի խափանման դեպքում մարզի ղեկավար կազմի ազդարարումն իրականացվում է սուրհանդակների միջոցով, իսկ բնակչության ազդարարումը և վարվելակերպի մասին կանոնները՝ մարզային ոստիկանության շարժական ուժերով ու միջոցներով:

Արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովի անդամները և համայնքների ղեկավարները կազմակերպում են ենթակա անձնակազմի ազդարարում և հավաքը, ստեղծում են օպերատիվ խմբեր և կազմակերպում դրանց աշխատանքը:

3. Բնակչության տարահանում

Տարահանման հանձնաժողովը ղեկավարում է մարզպետի տեղակալը: Հանձնաժողովի կազմի մեջ մտնում են բոլոր ծառայությունների ներկայացուցիչները, սոցիալական համակարգի և գինկոմիսարյատի աշխատակիցները:

Տարահանման հանձնաժողովի նախագահը ստանալով բնակչության տարահանման մասին մարզպետի որոշումը տալիս է հանձնարարականներ համապատասխան համայնքներում տարահանման հավաքակայաններ ծավալելու վերաբերյալ:

Հավաքակայանները պարտավոր են.

1. Մշտական ունենալ տվյալներ ջրածածկման գոտուց բնակչության տարահանման և կենտրոնացման քանակի վերաբերյալ,
2. Ընդունման կետում կազմակերպել բնակչության կենսաապահովման խնդիրները /համաձայն Գեղարքունիքի մարզի տարահանված բնակչության կենսաապահովման գործընթացների նախապատրաստման միջոցառումների պլանի /:

Ջրամբարների պատվարների փլուզման սպառնալիքի և փլուզման դեպքում Գեղարքունիքի մարզի տարահանման պլանի համաձայն տարահանում է նախատեսվում գ. Գեղարքունիքից 900մարդ, գ. Լանջաղբյուրից 700, գ. Գանձակից 350, գ. Կարմիրգյուղից 800, ք. Գավառից 1500, գ Նորատուսից 400 մարդ: Տարահանումն իրականացվում է հետիոտն տեղափոխվելով նույն համայնքի բարձրադիր վայրեր:

4. Հետախուզության կազմակերպում

Ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի կամ փլուզման մասին տվյալների ժամանակին ստացման և հիմնավորված որոշումներ ընդունելու նպատակով իրականացվում է ընդհանուր և հատուկ հետախուզություն:

Ընդհանուր հետախուզությունն իրականացվում է ջրածածկման գոտում իրավիճակի հիմնական տվյալների արագ ստացման, տուժածների հայտնաբերման և նրանց փրկելու հնարավորությունների ճշտման նպատակով:

Հատուկ հետախուզությունն իրականացվում է մասնագիտական տվյալների ստացման նպատակով՝ կախված խնդիրների բնույթից կատարվում են հրդեհային, ինժեներական, բժշկական, մանրէաբանական, անասնաբուժական հետախուզություններ՝ համապատասխան ծառայությունների ուժերով և միջոցներով:

Հետախուզությունն իրականացվում է ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի կամ փլուզման դեպքում՝ դրանց հետևանքների վերացման ողջ ընթացքում:

Հետախուզումը կազմակերպում և համակարգում է ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ-ն: ՄՓՎ-ն է որոշում հետախուզական կազմավորումների խնդիրները, աշխատանքային տեղամասերը, արդյունքների մասին զեկուցման կարգը և ժամանակը:

Հետախուզության ուժերի պատրաստականության ժամկետն է մինչև 1.30 Ժ:

5. Կանխարգելիչ միջոցառումներ /հնարավոր հետևանքների մեղմացում, վերացում/

Ջրամբարի պատվարի փլուզումը կանխելու հնարավոր հետևանքների նվազեցմանն ուղղված միջոցառումներն իրենցից ներկայացնում են կազմակերպական և ինժեներատեխնիկական միջոցառումների համալիր ուղղված վտանգավոր գործոնների հնարավոր մեղմացմանը, վթարավերականգնողական և այլ անհետաձգելի աշխատանքների կատարման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը:

Մեծ նշանակություն ունեն կազմակերպական և ինժեներատեխնիկական միջոցառումների ժամանակին և ողջ ծավալով կատարումը՝

- Ջրամբարի պատվարի վիճակի պարբերաբար ուսումնասիրում , անհրաժեշտության դեպքում ամրացման աշխատանքների իրականացում :
- Ջրամբարում ջրի սահմանված առավելագույն մակարդակի վրա վերահսկողության սահմանում:
- Կառավարման, կապի և ազդարարման համակարգերի հիմնում և դրանց բնականոն գործունեության ապահովում:
- Փրկարար ուժերի ստեղծում, պատրաստում անհրաժեշտ գույքով ու տեխնիկայով հագեցում և մշտական պատրաստության ապահովում:
- Կառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստում:
- Ջրամբարի փլուզման դեպքում բնակչության վարվելակերպի կանոնների ու գործողությունների ուսուցում:

6. Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական

աշխատանքների կազմակերպում /իրականացում/

Աղետալի ջրածածկման գոտում փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքները կազմակերպվում են մարզային փրկարարական

վարչության, վթարավերականգնողական հիմնարկների, տուժած համայնքների ուժերով:
Անհրաժեշտության դեպքում ներգրավվում են ուժեր և միջոցներ հարևան համայնքներից:

Փրկարարական աշխատանքները կազմակերպելիս հաշվի են առնվում.

ա. Ջրածածկման տարածքը և հետևանքները,

բ. փրկարարական աշխատանքների ծավալը, ներգրավվող ուժերի և միջոցների քանակը
ըստ համայնքների և փրկարարական աշխատանքների տեղամասերի,

գ. աշխատանքների կատարման անվտանգության միջոցառումները,

դ. ներգրավված ուժերի համագործակցության կարգը և գործողություններն ապահովող
միջոցառումները,

ե. պահեստային ուժերի և միջոցների կազմն ու տեղաբաշխումը,

զ. փրկարարական աշխատանքների համակողմանի ապահովման կարգը,

է. կառավարման կազմակերպման կարգը.

7. Փոխգործողություններ

Ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի և փլուզման դեպքում
փոխգործողությունները իրականացվում են ծառայությունների, կազմավորումների միջև՝
յուրաքանչյուրի առջև դրված խնդիրների ճշգրիտ ու անվերապահ կատարմամբ, և ստեղծված
իրավիճակի վերաբերյալ ձեռք բերված տեղեկատվության՝ ըստ առնչության, միմյանց
փոխանցմամբ:

Ա Ղ Յ ՈՒ Ս Ա Կ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՄԲԱՐՆԵՐԻ ՊԱՏՎԱՐՆԵՐԻ ՓԼՈՒԶՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ

Հ	Զրամբարների անվանումները/ գտնվելու վայրը	Ավագանային կառավարման տարածքի անվանումը	Շահագոր ծման հանձնման տարեթիվ ը	Հնարավոր ջրածածկման գոտում գտնվող բնակավայրերը /բնակչության թիվը/	Պատվարի բարձրություն նը, տիպը	Զրամբարների ծավալները	Ջրի հայելու մակերեսը /հա/
1	2	3	4	5	6	7	8
	Գեղարքունիք 2	Գավառի տարածաշրջան	1978թ	Գեղարքունիք, Լանջաղբյուր, Գանձակ, Կարմիրգյուղ, ք Գավառ, Նորատուա Տուժող բնակչության թիվը 6000մարդ Ջրածածկվող մասը 300հա Ջրածածկման սկիզբը Ժ+9 լոպե	9մ հողալիցքայի ն	ընդհանուր 320000 մ³ Օգտա կար 220000 մ³ Մեղյալ 100000 մ³	6 հա
	Լանջաղբյուր 2	Գավառի տարածաշրջան	1979թ	Լանջաղբյուր, Գանձակ, Կարմիրգյուղ, ք Գավառ, Նորատուա Տուժող բնակչության թիվը 5000մարդ Ջրածածկվող մասը 300հա Ջրածածկման սկիզբը Ժ+10 լոպե	7մ հողալիցքայի ն	ընդհանուր 300000 մ³ Օգտա կար 200000 մ³ Մեղյալ 100000 մ³	8,4 հա

ՀԱՇՎԱՐԿ

ՀԱՐԱՎՈՐ ԶՐԱԾԱԾԿԱՆ ԴԵՊՈԻԿ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ

	Տարահանման ենթակա բնակավայրերը			/ը/ միլիոնում սևուբով	Ընդունող բնակավայրերը		Շարժման երթուղին	Տրանսպորտի քանակ/վառելիքի քանակ
	Բնակավայրի անվանումը	Բնակչության թվաքանակը	Այդ թվում ենթակա է տարահանման		Անվանումը	Բնակչության թվաքանակը		
		Ընդամենը						
1	Ք. Գավառ	27723	1000	1	Ք. Գավառ	27723	Ք. Գավառ	հետիոտն
2	Գ. Գեղարքունիք	2128	1000	1	Գ. Գեղարքունիք	2128	Գ. Գեղարքունիք	հետիոտն
3	Գ. Լանջաղբյուր	2526	400	1	Գ. Լանջաղբյուր	2526	Գ. Լանջաղբյուր	հետիոտն
4	Գ. Գանձակ	4552	100	1	Գ. Գանձակ	4552	Գ. Գանձակ	հետիոտն
5	Գ. Կարմիրգյուղ	6358	1700	1	Գ. Կարմիրգյուղ	6358	Գ. Կարմիրգյուղ	հետիոտն
6	Գ. Նորատուա	6733	1800	1	Գ. Նորատուա	6733	Գ. Նորատուա	հետիոտն
Ընդամենը		50020	6000			50020		

Հավելված 5
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2016 թ. - ի
N որոշման

ՀՀ Հավելված 5
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2014 թ. մայիսի 22 - ի
N 96 - Ա որոշման

ՊԼԱՆ

ԽՈՇՈՐ ՀՐԴԵՀԱՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՕՐԵԿՏՆԵՐԻ ՎԹԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԾԵԼՈՒ

1. Իրավիճակի գնահատում և եզրակացություններ

Մարզում գործում են 16 բենգալցակայաններ և 29 ճնշումային գազալցակայաններ, որոնք ունեն 2-10 աշխատող:

Լցակայանները տեղակայված են բնակելի տարածքներից պատշաճ հեռավորության վրա, աշխատանքային ժամերին լցակայաններում մարդկանց /վարորդներ, ուղևորներ, լցակայանի աշխատակիցներ/ առավելագույն թիվը կազմում է 20 մարդ:

Լցակայաններում հրդեհապայթյունավտանգ իրավիճակ ստեղծվելու դեպքում հնարավոր է.

1. շենքի կամ առանձին մասերի փլուզում, այրվող օբեկտներին և հրդեհաշիջման նպատակով օգտագործվող ջրաղբյուրներին մոտենալու ճանապարհների խցանում, ներքին և արտաքին ջրացանցերի հրդեհաշիջման ստացիոնար համակարգերի, տեխնոլոգիական սարքավորումների վնասում կամ ոչնչացում,
2. հրդեհապայթյունավտանգ օբեկտի վայրում աշխատողների, ինչպես նաև վարորդների և ուղևորների կողմից վնասվածքներ ստանալը բեկորներից, կառուցատարրերի կտորներից, պայթյունի ալիքից, ինչպես նաև այրման և պայթյունի թունավոր արգասիքներից:
3. ամբարների պատերի պատռվածք, նավթամթերքների եռում և արտանետում.
4. ամբարի ծածկի փլուզման հետևանքով գոտիների առաջացում, որոնք կղժկարացնեն կրակմարման նյութերի տալը.
5. կրակի արագ տարածում տեխնոլոգիական բաքերով, կոյուղով և այլ համակարգերով.
6. այրման արգասիքների և ջերմային հոսքերի ուղղությունների փոփոխություն՝ օդերևութաբանական պայմաններից կախված:

2. Ազդարարում

Հրդեհապայթյունավտանգ իրավիճակի առաջացման վերաբերյալ տեղեկատվությունը մարզային փրկարարական վարչության ՃԿԿ կրտսեր հրահանգիչը ստանում է օբյեկտների կամ համայնքների ղեկավարներից, հրշեջ փրկարարական ջոկատներից կամ ոստիկանության ստորաբաժանումներից և զեկուցում մարզային փրկարարական վարչության պետին ու մարզպետին:

Մարզային փրկարարական վարչության պետի հրամանով ՃԿԿ կրտսեր հրահանգիչը իրականացնում է համապատասխան հրշեջ փրկարարական ջոկատի, ջրափրկարարական ջոկատի, ոստիկանության մարզային վարչության և այլ իրավասու ծառայությունների ազդարարումը:

3. Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացում

Հրդեհապայթյունավտանգ օբյեկտներում վթար առաջանալու դեպքում իրականացվում են բնակչության պաշտպանության հետևյալ միջոցառումները.

1. կառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության ազդարարում,
2. աղետի գոտուց բնակչության տարահանում, անվտանգ վայրեր
3. աղետի գոտում փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կատարում,
4. աղետի գոտում հասարակական կարգի պահպանում, կարևորագույն և բնակչության կենսագործունեությունն ապահովող օբյեկտների պահպանության ուժեղացում,
5. աղետի գոտում քաղաքացիների, տրանսպորտային միջոցների տեղաշարժման, կանոնակարգում,
6. գույքի, նյութատեխնիկական պաշարների, տրանսպորտային և այլ միջոցների նպատակային հավաքում և օգտագործում,
7. բնակչության բժշկական սպասարկման իրականացում,
8. բնակչության պաշտպանության միջոցառումների ինժեներական, տրանսպորտային, բժշկական, հակահրդեհային և նյութատեխնիկական ապահովում:

Արտակարգ իրավիճակի գոտում իրավիճակի հետագա զարգացման կանխատեսումը, ընդհանուր և հրդեհային հետախուզությունն իրականացնվում է օբյեկտի, մարզային ու համայնքային ծառայությունների, ինչպես նաև մարզային փրկարարական վարչության հետախուզական խմբերի կողմից:

Փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներում առաջնահերթ ընդգրկվում են փրկարարական և հրշեջ փրկարարական ցուկատները, ոստիկանության և բժշկական ծառայության ուժերը, որից հետո վթարի հետևանքների վերացման աշխատանքներում ընդգրկվում են օբյեկտի աշխատողները, մարզային, համայնքային և ծառայությունների ուժերը:

4. Կանխարգելիչ միջոցառումներ /հետևանքների մեղմացում, վերացում/

Կանխարգելիչ կամ հետևանքների մեղմացմանն ուղղված աշխատանքներն իրենցից ներկայացնում են կազմակերպական և ինժեներա-տեխնիկական միջոցառումների համալիր, ուղղված հրդեհներ, պայթյուններ առաջացնող գործոնների կանխորոշմանն ու վերացմանը, ազդեցության հնարավոր մեղմացմանը, ինչպես նաև վթարափրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների կատարման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը:

Մեծ նշանակություն ունեն կազմակերպական և ինժեներա-տեխնիկական միջոցառումների ժամանակին և ողջ ծավալով կատարումը: Այդպիսի միջոցառումների թվին են դասվում.

1. բնակավայրերի գլխավոր հատակագծերում և մանրամասն հատակագծման նախագծերում հրդեհապայթյունավտանգ օբեկտների նպատակահարմար տեղաբաշխումը բնակչության պաշտպանության տեսանկյունից,
2. շենքերի, շինությունների, ինժեներական ցանցերի, հիդրոտեխնիկական կառույցների, հաղորդակցության ուղիների շինարարությունը անվտանգության և հուսալիության անհրաժեշտ մակարդակով,
3. հրդեհապայթյունավտանգ օբյեկտների անվթար գործունեության ապահովումը,
4. կառավարման, կապի ու ազդարարման համակարգերի հիմնումը և դրանց բնականոն գործունեության ապահովումը,
5. փրկարար ուժերի / կազմավորումների/ ստեղծումը, պատրաստումը, անհրաժեշտ գույքով ու տեխնիկայով հագեցումը և մշտական պատրաստվածության ապահովումը,
6. կառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստումը,
7. բնակչությանը արտակարգ իրավիճակներում վարվելակերպի կանոնների ու գործողությունների ուսուցումը:

5. Հրդեհաշիջման կազմակերպում

Հրդեհաշիջման աշխատանքներում առաջնահերթ ընդգրկվում են տարածքը սպասարկող հրշեջ փրկարարական ջոկատը, որից հետո վթարի հետևանքների վերացման աշխատանքներում ընդգրկվում են օբյեկտի աշխատողները, մարզային, համայնքային և ծառայությունների ուժերը:

Հրդեհաշիջման աշխատանքների ղեկավար է հանդիսանում առաջինը հրդեհի վայր ժամանած հրշեջ փրկարարական ստորաբաժանման ավագ պետը:

Հրդեհի վայրում հրդեհաշիջման գործողությունների վճռական ուղղություն է համարվում այն ուղղությունը, որտեղ սպառնալիք է ստեղծվել մարդկանց, պայթյունի և կրակի առավել ինտենսիվ տարածման համար ու որտեղ ստորաբաժանումների գործողությունները տվյալ պահին կարող են ապահովել հրդեհաշիջման հաջողությունը:

Հրդեհապայթյունավտանգ օբյեկտներում հրդեհաշիջում կատարելու ժամանակ անհրաժեշտ է՝

1. պարզել պայթյունի սպառնալիքը, հրդեհապայթյունավտանգ նյութերի քանակը, տեսակը և տեղը, դրանց տարահանման եղանակները, տեխնոլոգիական սարքավորումների և հրդեհաշիջման համակարգերի վիճակը.

2. սահմանել վտանգավոր գոտում աշխատողներին արագ տեղեկացնելու միասնական ձգձգանշան և դրա մասին ծանուցել անձնակազմին.

3. հրդեհաշիջման աշխատանքները կազմակերպելիս հաշվի առնել պայթյունիկ նյութերի զգայնության աստիճանը, դետոնացիան՝ ջրի հոծ շիթի հարվածից: Պայթյունիկ նյութերի հանգիստ այրվելու, ինչպես նաև նրանց հալված վիճակի դեպքում օգտագործել փրփուր, անձրևացրած ջուր.

4. մարելու հետ միաժամանակ կատարել այն տեխնոլոգիական սարքավորումների հովացում, որոնց սպառնում է բարձր ջերմաստիճան, իսկ հնարավորության դեպքում տարահանել նաև պայթյունիկ նյութեր.

5. զգուշություն ցուցաբերել պայթյունիկ նյութերը տարահանելու, ինչպես նաև կառուցատարրերը բացելու և քանդելու դեպքում, որպեսզի մեխանիկական ազդեցությունից պայթյուն չառաջանա.

6. նախատեսել հավանական վնասումների գոտուց դուրս գտնվող ջրաղբյուրներից ուժերն ու միջոցները բացազատելու պահեստային տարբերակ.

7. կազմակերպել շրջապատի շենքերի և շինությունների հետախուզությունն ու դիտարկումը, նշանակել պահակետեր, ապահովել նրանց հրդեհաշիջման միջոցներով՝ հրդեհի նոր օջախները մարելու համար:

Հրդեհի հետախուզության ժամանակ, բացի հետախուզության ընդհանուր խնդիրների կատարումից, անհրաժեշտ է պարզել՝

1. այրվող և հարակից ամբարներում պահվող այրվող ու դյուրավառ հեղուկների քանակը, տեսակը, լցման մակարդակը, ամբարի տանիքի փլվածության բնույթը.

2. թմբապատնեշների վիճակը, արտանետման դեպքում հարակից շինություններին վնասելու վտանգը, հեղուկի հոսելու հնարավոր ուղիները.

3. արտադրական և անձրևաջրերի կոյուղիների, դիտահորերի ու հիդրոփականների առկայությունը և վիճակը.

4. ամբարից նավթամթերքը քաշելու կամ դուրս թողնելու և այնտեղ ջուր կամ գոլորշի մղելու հնարավորությունը.

5. հրդեհաշիջման, ջրամատակարարման և փրկի ապոյացնող միջոցների ու համակարգերի առկայությունը և վիճակը, հարակից օբյեկտներից փրկահեղուկի արագ կրման հնարավորությունը:

6. Փրկարարական աշխատանքների կազմակերպում

Փրկարարական աշխատանքները ղեկավարում է մարզային փրկարարական վարչությունը:

Հրդեհապայթյունավտանգ օբեկտների վթարներ հետևանքների վերացման ժամանակ փրկարարական աշխատանքների հիմնական ճիգերը կենտրոնացվում են, հրդեհապայթյունավտանգ օբեկտներից մարդկանց դուրս բերման ու բժշկական օգնության ցուցաբերման, ինչպես նաև գույքի փրկման ուղղությամբ:

7. Փոխգործողություններ

Խոշոր հրդեհապայթյունավտանգ օբեկտների վթարի դեպքում փոխգործողությունները իրականացվում են ծառայությունների, կազմավորումների միջև՝ յուրաքանչյուրի առջև դրված խնդիրների ճշգրիտ ու անվերապահ կատարմամբ, և ստեղծված իրավիճակի վերաբերյալ ձեռք բերված տեղեկատվության՝ ըստ առնչության, միմյանց փոխանցմամբ:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԴԵՀԱՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ	Օբյեկտի անվանումը, հասցեն	Պայթուցիկ տեսակը	Օբյեկտում աշխատող մարդկանց քանակը մակերեսը (մարդ/մ²)
1.	<Նոր Բագրևանդ> ՍՊԸ գ. Լիճք ԱԳԼԾԿ	գազ	5 / 150մ²
2.	<Հայկ և Նորիկ> ՍՊԸ գ. Երանոս ԱԳԼԾԿ	գազ	5 / 100 մ²
3.	Շարժական գազալցակայան ք. Ճամբարակ ԱԳԼԾԿ	գազ	1/20 մ²
4.	ԱՁ <Սողոմոն Երիցյան> ք. Ճամբարակ ԱԳԼԾԿ	գազ	1/10 մ²
5.	<Ուրսա-մաժոր> ՍՊԸ ք. Ճամբարակ ԱԳԼԾԿ	գազ	5/82 մ²
6.	<Տիգարել> ՍՊԸ ք. Ճամբարակ ԱԳԼԾԿ	գազ	5/60 մ²
7.	<Մակվիչ> ՍՊԸ ք. Վարդենիս ԱԳԼԾԿ	գազ	4/30 մ²
8.	<Անուշ -Քնար> ՍՊԸ ք. Վարդենիս ԱԳԼԾԿ	գազ	6/150 մ²
9.	<Ինեսա և Իրինա քույրեր> ՍՊԸ ք. Վարդենիս ԱԳԼԾԿ	գազ	4/70 մ²
10.	<Գոյա և Սեդա Հարությունյաններ> ք. Վարդենիս ԱԳԼԾԿ	գազ	7/400 մ²
11.	<Այ էմ սի էս> ՍՊԸ Սևան- Գավառ- Լճաշեն խաչմերուկ ԱԳԼԾԿ	գազ	7/1200 մ²
12.	<Հուսիկ Սեդրակյան և ընկերներ> ՍՊԸ Երևան- Սևան ա/մ ԱԳԼԾԿ	գազ	7/2000 մ²
13.	<Քյավառ և Նաիրի> ՍՊԸ Սևան- Երևան ա/մ ԱԳԼԾԿ	գազ	7/2000 մ²
14.	<Գազ ԱՄԱ> ՍՊԸ Երևան - Սևան 58կմ ԱԳԼԾԿ	գազ	6/800 մ²
15.	<Արտկա- Տեքս>ՍՊԸ Երևան- Սևան 62 կմ ԱԳԼԾԿ	գազ	7/2500 մ²
16.	ԱՁ <Գրայիկ Ղուկասյան> ք. Սևան ԱԳԼԾԿ	գազ	5/600 մ²
17.	<Գայլինո> ՍՊԸ Երևան-Սևան-ԴԴՄաշեն ԱԳԼԾԿ	գազ	6/800 մ²
18.	<Ալիք> ՍՊԸ Երևան-Դիլիջան 76 կմ ԱԳԼԾԿ	գազ	7/1000մ²
19.	<Լեվկեն> ՍՊԸ Սևան -Երևան 5 կմ ԱԳԼԾԿ	գազ	7/1000 մ²
20.	<Սեդանի> ՍՊԸ Սևան-Երևան 8կմ ԱԳԼԾԿ	գազ	7/2000 մ²
21.	<Ալբերնա> ՍՊԸ Սևան-Գավառ 3կմ ԱԳԼԾԿ	գազ	4/600 մ²
22.	<Եր-Ռու> ՍՊԸ Սևան-Գավառ -Չկալովկա ԱԳԼԾԿ	գազ	5/800 մ²
23.	<Ալիք> ՍՊԸ գ. Սարուխան ԱԳԼԾԿ	գազ	4/300 մ²
24.	<Ալիք> ՍՊԸ գ. Նորատուս ԱԳԼԾԿ	գազ	4/300 մ²
25.	<Ալիք> ՍՊԸ գ. Բերդկունք ԱԳԼԾԿ	գազ	5/800 մ²
26.	<Ալիք> ՍՊԸ ք. Գավառ ԱԳԼԾԿ	գազ	5/800 մ²
27.	<Ավետ- Միեր> ՍՊԸ ք. Մարտունի Կամոյի 4 ԱԳԼԾԿ	գազ	8/2500 մ²
28.	<Արմեն-Վահագ> ՍՊԸ գ. Աստղածոր ԱԳԼԾԿ	գազ	7/2200 մ²
29.	<Պավել և ընկերներ> ՍՊԸ ք. Մարտունի Արովյան 1 ԱԳԼԾԿ	գազ	5/600 մ²
30.	Հայրավանքի բենզալցակայան Ս. Համբարձումյան	Բենզին, դիզ վառ.	2/35 մ²

31.	Շարժական բենզալցակայան Բ. Բաղդասարյան	Բենզին, դիզ վառ.	1/5 մ ²
32.	Ա.Ձ Էդգար Գալոյան	Բենզին, դիզ վառ	1/30 մ ²
33.	<Սաշիկ Սինանյան> ՍՊԸ	Բենզին, դիզ վառ	1/140 մ ²
34.	Ա.Ձ Վանիկ Մաթոսյան Ազատության 24	Բենզին, դիզ վառ	1/10 մ ²
35.	Ա.Ձ Արարատ Գափոյան	Բենզին, դիզ վառ	1/8 մ ²
36.	<Փարվանա>ՍՊԸ ք. Մարտունի	Բենզին, դիզ վառ	1/25 մ ²
37.	Ա.Ձ Գրիգոր Պետրոսյան գ. Գեղիովիտ	Բենզին, դիզ վառ	1/40 մ ²
38.	Ա.Ձ Ազիզյան Վահե գ. Գեղիովիտ	Բենզին, դիզ վառ	1/20 մ ²
39.	Ա.Ձ Վարդան Մելիքյան գ. Ներքին Գետաշեն	Բենզին, դիզ վառ	1/30 մ ²
40.	Ա.Ձ <Սերյոժա Թումեյան> գ. Երանոս	Բենզին, դիզ վառ	1/30 մ ²
41.	Ա.Ձ Հակոբ Քոսայան գ. Երանոս	Բենզին, դիզ վառ	1/10 մ ²
42.	<Ալիկ և Սոս> ՍՊԸ ք. Ճամբարակ	Բենզին, դիզ վառ	1/20 մ ²
43.	<Դուստր Սուսաննա> ՍՊԸ ք. Ճամբարակ	Բենզին, դիզ վառ	1/10 մ ²
44.	<Ասպեր և ընկերներ> ՍՊԸ ք. Ճամբարակ	Բենզին, դիզ վառ	1/149 մ ²
45.	Ա.Ձ Կարո Հարությունյան ք. Ճամբարակ	Բենզին, դիզ վառ	1/20 մ ²

Պ Լ Ա Ն

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՎԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ, ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ ԵՎ ՍԵԼԱՎԻ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԾԵԼՈՒ

1. Հնարավոր վտանգավոր տեղամասերի նկարագրություն և եզրակացություն

Մարզում առկա են 6 խոշոր լեռնային գետեր.

1. Գավառագետը, որի ջրի միջին մակարդակը կազմում է 70սմ, գարնանային վարարումների ժամանակ առավելագույն մակարդակը 200սմ, վտանգավոր /խոցելի/ հատվածներն են Գեղարքունիք, Լանջաղբյուր, Սարուխան, Գանձակ, Կարմիրգյուղ, Նորատուս, Ծաղկաշեն և Գավառ համայնքները:
2. Արգիճին, որի ջրի միջին մակարդակը կազմում է 50սմ, գարնանային վարարումների ժամանակ առավելագույն մակարդակը 170սմ, վտանգավոր /խոցելի/ հատվածներն են Մաղինա, Լեռնհովիտ և Ն. Գետաշեն համայնքները:
3. Մարտունի գետ, որի ջրի միջին մակարդակը կազմում է 50սմ, գարնանային վարարումների ժամանակ առավելագույն մակարդակը 160սմ, վտանգավոր /խոցելի/ հատվածներն են Մարտունի, Գեղհովիտ համայնքները:
4. Մասրիկ գետ, որի ջրի միջին մակարդակը կազմում է 40սմ, գարնանային վարարումների ժամանակ առավելագույն մակարդակը 130սմ, վտանգավոր է Մ. Մասրիկ համայնքի համար:
5. Ձկնագետ, որի ջրի միջին մակարդակը կազմում է 50սմ, գարնանային վարարումների ժամանակ առավելագույն մակարդակը 170սմ, վտանգավոր է Ծովագյուղ համայնքի համար:
6. Գետիկ գետ, որի ջրի միջին մակարդակը կազմում է 40սմ, գարնանային վարարումների ժամանակ առավելագույն մակարդակը 150սմ, վտանգավոր /խոցելի/ հատվածներն են Ձորավանք, Դպրաբակ, Այգուտ, Մարտունի, Գետիկ, Թթուջուր, Ճամբարակ համայնքները:

Հեղեղումները հիմնականում առաջանում են գարնանային ձնհալքի ժամանակ՝ ապրիլ - հունիս ամիսներին և ընդգրկում են, ինչպես մարզի խոշոր գետերի այնպես էլ

սելավատարերի հարակից տարածքները, այդպիսով ընդգրկելով գրեթե մարզի ողջ տարածքը: Հեղեղումներ են հնարավոր նաև ամառվա ընթացքում տեղացած ուժեղ անձրևների, կարկուտների հետևանքով:

Գարնանային վարարումների, ջրհեղեղների և սելավների դեպքում կտուժեն մոտ 25 համայնքների գետամերձ տարածքները, ջրածածկման գոտում կհայտնվեն բնակելի տարածքներ, մշակովի հողատարածքներ ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիներ: Կջրածածկվի ավտոճանապարհներ, կամուրջներ, գազամուղեր և էլ. հաղորդման գծեր:

2. Բնակչության իրազեկում

Մարզային ռադիոցանցի, հեռուստատեսության միջոցով տրվում է տեքստային հաղորդում սպասվող վարարումների, ջրհեղեղների և սելավների վերաբերյալ:

Բնակչության իրազեկումը կարող է իրականացվել նաև շարժական բարձրախոսների օգնությամբ:

3. Ազդարարում /ըստ փոխգործողության/

Հեղեղման կամ դրա անմիջական սպառնալիքի մասին ահազանգ ստանալիս մարզային փրկարարական վարչության պետի հրահանգով ՄՓՎ ՃԿԿ կրտսեր հրահանգիչը ազդարարում է վարչության անձնակազմին և մարզի ղեկավար կազմին «ՀԱՅՏԱՐԱՐՎՈՒՄ Է ՀԱՎԱՔ» ազդանշանով:

Անմիջապես խոցված համայնքների վարչակազմի ուժերով անցկացվում է հետախուզություն հետևյալ խնդիրներով՝

1. առաջացած ավերվածությունների /ջրածածկման գոտիների և այլն/ ծավալների տուժածների մոտավոր թվաքանակի որոշում.
2. դեպի խոցված օջախներ ճանապարհների առկայությունը և վիճակը, ինժեներական տեխնիկայի /լողամիջոցների/ օգտագործման հնարավորությունը և անհրաժեշտությունը.
3. տնտեսությանը օբյեկտների վիճակի; հացով, ջրով, սննդամթերքներով ապահովվածության որոշումը.
4. պահպանված ուժերի, միջոցների և տեխնիկայի թվաքանակի և վիճակի ճշգրտում:

Հետախուզության տվյալները հաղորդվում են մարզային փրկարարական վարչություն ըստ սահմանված ժամանականույցի, որտեղ կատարվում է կուտակված տեղեկատվության վերլուծություն և ներկայացվում է մարզպետին, համապատասխան առաջարկություններով հանդերձ:

4. Բնակչության տարահանում

Տարահանման միջոցառումները նախատեսվում են՝

1. հեղեղման սպառնալիքի դեպքում՝ բնակչության նախապես տեղահանման և անվտանգ գոտում տեղաբաշխման միջոցով:
2. հեղեղման առաջացման դեպքում տարահանումը իրականացվում է առաջին բուժօգնության ցուցաբերմամբ տրանսպորտային ծառայության ուժերով և միջոցներով /անհրաժեշտության դեպքում օգտագործվում է նաև լողամիջոցներ/: Ինժեներական և տրանսպորտային ծառայությունների ուժերով ապահովվում է երթուղիների անցանելիությունը:

Տարահանման միջոցառումները կազմակերպում և իրականացնում է մարզային տարահանման հանաձնաժողովը:

5. Վթարավերականգնողական աշխատանքների իրականացում

Փրկարարական, վթարավերականգնողական աշխատանքները ներառում են՝

1. մարդականց, գյուղ, կենդանիների և նյութական արժեքների որոնումը, հայտնաբերումը և անվտանգ վայրեր անվնաս տեղափոխումը.
2. բժշկական և այլ օգնությունների ցուցաբերումը.
3. կոմունիկացիոն վթարների վերացումը.
4. ափերի ամրացման աշխատանքներ հեղեղման տարածումը կանխելու նպատակով:

Վթարավերականգնողական աշխատանքների անցկացման առաջին փուլում /1-3 ժամ/ ներգրավվում են տեղում պահպանված կազմավորումները, մարզային փրկարարական վարչության ստորաբաժանումները, բժշկական, ՀԿՊ, ինժեներական, կոմունալ տեխնիկական, տրանսպորտային ծառայությունների տարածքային կազմավորումները:

Աշխատանքները ղեկավարում են համապատասխան համայնքների և կազմակերպությունների ղեկավարները: Այդ աշխատանքների իրականացման համար լրացուցիչ ներգրավվում են ուժեր և միջոցներ հարևան համայնքներից, իսկ անհրաժեշտության դեպքում նաև հանրապետության այլ մարզերից՝ 3-24 ժամվա ընթացքում:

6. Կանխարգելիչ միջոցառումներ /հնարավոր հետևանքների մեղմացում, վերացում/

Գարնանային վարարումների, ջրհեղեղների և սելավների կանխմանն ու հնարավոր հետևանքների նվազեցմանն ուղղված միջոցառումներն իրենցից ներկայացնում են

կազմակերպական և ինժեներա-տեխնիկական միջոցառումների համալիր, ուղղված հեղեղումներ առաջացնող գործոնների կանխորոշմանն ու վերացմանը, ազդեցության հնարավոր մեղմացմանը, ինչպես նաև վթարավերականգնողական և այլ անհետաձգելի աշխատանքների կատարման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը:

Մեծ նշանակություն ունեն կազմակերպական և ինժեներա-տեխնիկական միջոցառումների ժամանակին և ողջ ծավալով կատարումը: Այդպիսի միջոցառումների թվին են դասվում.

1. պարբերաբար գետերի և սելավատարների հունների մաքրումը
2. ափապատնեշների կառուցումը
3. ափերի ամրացումը
4. կառավարման, կապի ու ազդարարման համակարգերի հիմնումը և դրանց բնականոն գործունեության ապահովումը,
5. փրկարար ուժերի ստեղծումը, պատրաստումը, անհրաժեշտ գույքով ու տեխնիկայով հագեցումը և մշտական պատրաստվածության ապահովումը,
6. կառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստումը,
7. բնակչությանը գարնանային վարարումների, ջրհեղեղների և սելավների դեպքում վարվելակերպի կանոնների ու գործողությունների ուսուցումը:

Գարնանային վարարումների, ջրհեղեղների և սելավների հետևանքների մեղմացմանն ուղղված միջոցառումներն են.

1. ավազով լցված պարկերի կուտակում
 2. հողաքարային զանգվածի օգտագործում
 3. պաշտպանիչ պատնեշների կառուցում
- քանդման միջոցով ջրահեռացման կատարում

7. Փոխգործողություններ

Գարնանային վարարումների, ջրհեղեղների և սելավների դեպքում փոխգործողությունները իրականացվում են ծառայությունների, կազմավորումների միջև՝ յուրաքանչյուրի առջև դրված խնդիրների ճշգրիտ ու անվերապահ կատարմամբ, և ստեղծված իրավիճակի վերաբերյալ ձեռք բերված տեղեկատվության՝ ըստ առնչության, միմյանց փոխանցմամբ:

ԱՂՅՈՒՄԱԿ
ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԿԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ, ԶՐՀԵՂԵՂՆԵՐԻ ԵՎ ՍԵՆԱԿԻ ԴԵՊՔՈՒՄ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿՏԱՆԳԱԿՈՐ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ

Հ/Հ	Համայնքի անվանումը	Համայնքում առկա ինժեներական տեխնիկա /հատ/	Գետի, հեղեղատարի վտանգավոր տարածքի երկարությունը /մետր/
1	ք. Գավառ Արծվաքար և Հացառատ թաղամասեր	Մղան 4 Էքսկավատոր 1 Ավտոկռունկ 5 Ինքնաթափ 22	Գավառագետ 1500 սելավատար 300
2	գ. Նորատուռ	Մղան 4 Էքսկավատոր 1 Ավտոկռունկ 2 Ինքնաթափ 1	Գավառագետ 270
3	գ. Գեղարքունիք	Մղան 2 Էքսկավատոր 1 Ինքնաթափ 3	Գավառագետ 1700
4	գ. Լանջաղբյուր	Էքսկավատոր 1 Ինքնաթափ 4	Գավառագետ 1000
5	գ. Սարուխան	Ավտոկռունկ 2 Ինքնաթափ 5	Գավառագետ 1700
6	գ. Գանձակ	Էքսկավատոր 2 Ավտոկռունկ 3 Ինքնաթափ 9	Գավառագետ 800
7	գ. Կարմիրգյուղ	Էքսկավատոր 1 Ավտոկռունկ 3 Ինքնաթափ 10	Գավառագետ 600
8	գ. Ծաղկաշեն	Էքսկավատոր 1 Ինքնաթափ 2	Գավառագետի վտակ 600
9	ք. Մարտունի	Մղան 3 Էքսկավատոր 10 Ավտոկռունկ 15 Ինքնաթափ 38	Մարտունի գետ 400
10	գ. Արծվանիստ	Էքսկավատոր 1 Ինքնաթափ 2	Սելավատար 450
11	գ. Կարդաձոր	Մղան 6 Էքսկավատոր 6 Ինքնաթափ 40	Սելավատարի 800
12	գ. Գեղիովիտ	Մղան 4 Էքսկավատոր 3 Ինքնաթափ 34	Մարտունի գետ 300
13	գ. Վ. Գետաշեն	Մղան 4 Էքսկավատոր 1 Ինքնաթափ 22	Սելավատար 450
14	գ. Ն. Գետաշեն	Մղան 4 Էքսկավատոր 4 Ավտոկռունկ 2 Ինքնաթափ 30	Արգիճի գետ 800
15	գ. Կարդենիկ	Մղան 3 Էքսկավատոր 5 Ավտոկռունկ 1	Կարդենիկի գետ 1500

		Ինքնաթափ 18	
16	գ. Լիճք	Մղան 1 Էքսկավատոր 1 Ավտոկռունկ 1 Ինքնաթափ 22	Լիճքի գետ 400
17	գ. Ջորագյուղ	Մղան 2 Էքսկավատոր 1 Ավտոկռունկ 1 Ինքնաթափ 25	Ջորագետ 900
18	գ. Կարճաղբյուր	Մղան 1 Էքսկավատոր 1 Ինքնաթափ 5	Կարճաղբյուր գետ 750
19	գ. Մ. Մասրիկ	Ավտոկռունկ 1 Ինքնաթափ 20	Մասրիկ գետ 1200
20	ք. Ճամբարակ	Մղան 6 Էքսկավատոր 6 Ավտոկռունկ 3 Ինքնաթափ 31	Գետիկ գետ 700
21	գ. Ղալաբակ	Ինքնաթափ 2	Գետիկ գետ 300
22	գ. Մարտունի	Մղան 1 Էքսկավատոր 1 Ավտոկռունկ 1 Ինքնաթափ 2	Գետիկ գետ 400
23	գ. Ջորավանք	Էքսկավատոր 1 Ինքնաթափ 1	Գետիկ գետ 350
24	գ. Այգուտ	Ինքնաթափ 2	Գետիկ գետ 500
25	գ. Գետիկ	Մղան 1 Էքսկավատոր 1 Ինքնաթափ 3	Գետիկ գետ 400
26	գ. Կալավան	Մղան 1 Ինքնաթափ 1	Բարեպատ գետ 500
27	գ. Թթուջուր	Մղան 4 Էքսկավատոր 2 Ինքնաթափ 4	Գետիկ գետ 550

**ՁՆԱԲՔԻ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԾԵԼՈՒ ՊԼԱՆ**

1. Հնարավոր վտանգավոր տարածքների նկարագրություն և եզրակացություն

Մարզում առկա հանրապետական և համայնքային նշանակության ավտոճանապարհներից ձնաքի հետևանքով հիմնականում փակվում են Վարդենյաց լեռնանցքով անցնող հանրապետական նշանակության ավտոճանապարհը, Վարդենիս-Քարվաճառ հանրապետական նշանակության ավտոճանապարհը և մի շարք գյուղերի համայնքային նշանակության ավտոճանապարհները:

Վարդենյաց լեռնանցքով անցնող հանրապետական նշանակության ավտոճանապարհը անցնում է մարզի հարավ-արևմտյան մասով, լեռնանցքը ունի բարդ կտրտված ռելեյֆ, ինչն էլ նպաստում է ձնաքից ճանապարհի փակվելուն:

Վարդենիս-Քարվաճառ հանրապետական նշանակության ավտոճանապարհը անցնում է մարզի հարավային մասով, ունի խիստ կտրտված ռելեյֆ, ինչը նույնպես նպաստում է ձնաքից ճանապարհի փակվելուն:

Ձնաքի հետևանքով փակված ավտոճանապարհներին կարող են խցանվել ավտոմեքենաներ: Խցանման հետևանքով կտուժեն վարորդները, ուղևորները:

2. Իրավիճակի կանխատեսում /վտանգավոր հատվածներում երթևեկության ժամանակավոր սահմանափակում/

Օթերկութաբանական ծառայության կանխատեսումներով ձյան տեսքով տեղումների բարձր քանակությունների դեպքում դադարեցվում է Վարդենյաց լեռնանցքով, Վարդենիս-Քարվաճառ և որոշ համայնքների ավտոճանապարհներով երթևեկությունը:

3. Բնակչության իրազեկում

Ռադիոցանցի միջոցով տրվում է տեքստային հաղորդում կանխատեսվող ձնաքի վերաբերյալ:

Բնակչության իրազեկումը իրականացվում է նաև մարզային հեռուստատեսությամբ, ինչպես նաև շարժական բարձրախոսների օգնությամբ:

4. Պատրաստականության բերում

Ահազանգ ստանալու պահից 30 րոպեի ընթացքում ուժերն ու միջոցները բերվում են պատրաստականության: Մարզային փրկարարական վարչության ՃԿԿ կրտսեր հրահանգիչը տեղեկացնում է տվյալ ճանապարհը սպասարկող ճանապարհների շինարարության և շահագործման կազմակերպությանը և շահագրգիռ ծառայություններին:

5. Բնակչության պաշտպանության միջոցառումներ

Ձնաբքի ժամանակ բնակչության պաշտպանության միջոցառումներն են.

1. կառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության ազդարարում,
2. ԱԻ գոտուց բնակչության տարահանում,
3. ԱԻ վայրում փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կատարում,
4. ԱԻ գոտում հասարակական կարգի պահպանում, կարևորագույն և բնակչության կենսագործունեությունն ապահովող օբյեկտների պահպանության ուժեղացում,
5. ԱԻ գոտում բնակչության կենսաապահովման միջոցառումների իրականացում,
6. ԱԻ գոտում բնակիչների, տրանսպորտային միջոցների տեղաշարժման, բեռների ներմուծման ու արտահանման կանոնակարգում,
7. գույքի, նյութատեխնիկական պաշարների, տրանսպորտային և այլ միջոցների նպատակային հավաքում և օգտագործում,
8. գյուղատնտեսական կենդանիների պաշտպանություն,
9. բնակչության բժշկական սպասարկման իրականացում,
10. բնակչության պաշտպանության միջոցառումների ինժեներական, տրանսպորտային, բժշկական և նյութատեխնիկական ապահովում:

Ձնաբքի դեպքում կանխարգելիչ մեջոցառումներն են.

- Բնակչությանը իրազեկում ճանապարհների անցանելիության մասին՝ հնարավոր խցանումներից և ցրտահարումներից խուսափելու նպատակով
- Ավտոճանապարհների մշտական անցանելիության ապահովում
- վտանգավոր հատվածներում երթևեկության ժամանակավոր սպիմանափակում
- փրկարար ուժերի / կազմավորումների/ ստեղծումը, պատրաստումը, անհրաժեշտ գույքով ու տեխնիկայով հագեցումը և մշտական պատրաստվածության ապահովումը,
- կառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստումը,
- բնակչությանը ձնաբքի դեպքում վարվելակերպի կանոնների ու գործողությունների ուսուցումը:

6. Փոխգործողություններ

Ձնաբքի դեպքում փոխգործողությունները իրականացվում են ծառայությունների, կազմավորումների միջև՝ յուրաքանչյուրի առջև դրված խնդիրների ճշգրիտ ու անվերապահ կատարմամբ, և ստեղծված իրավիճակի վերաբերյալ ձեռք բերված տեղեկատվության՝ ըստ առնչության, միմյանց փոխանցմամբ:

		.			.			. Վերջին	20- 30 60 60
12	Թիվ 3 մ/թ	Սևան	1x500	4	1985	Հացա ռատ		բ. Սևան	
13	Կենտրոնական	Սևան	2x200	6	1970	Հացա ռատ		բ. Սևան	60
Մարտունու տարածաշրջան									
14	Մարտունու ՕԿԶ	Մարտունի	6767	2x2000	4	1975	«Հովդեպար»	25-30	բ. Մարտունի
Վարդենիսի տարածաշրջան									
15	«Թավեր» ՕԿԶ	Վարդենիս	8000	4000	4	1974-90	Շատյորեն ք.	30	բ. Վարդենիս
16	«Ալմեր» ՕԿԶ	Վարդենիս	40	2000	4	1974	Շատյորեն ք.	15	բ. Վարդենիս
Համբարակի տարածաշրջան									
17		Համբարակ	2242	1000	7	1984		3,5/3	Համբարակի
18		Թելուցուր	1,2	470	5	1986	Յութ արկղւոր	7	Թելուցուր
19	Վանքից եկող	Հորավանք	0,08	30,0	4,0	1987	Վանքից էկող	0,3	Հորավանք
20	Անտառամիջից էկող	Հորավանք	0,06	25,0	3,0	1972	Անտառա միջից էկող	0,2	Հորավանք
21	Մարչուզ	Այգուտ					Մարչուզ	4	Այգուտ
22	Լճի	Այգուտ					Լճի	2	Այգուտ
23	Գլխի	Այգուտ					Գլխի	3,5	Այգուտ
24	N 1	Գետիկ	0,14	25	25	1972	Բնագըն գան	2,5	Գետիկ
25	N 2	Գետիկ	0,25	50	2,5	1972	Կրփեն	5	Գետիկ
26	N 3	Գետիկ	0,08	3	1,5	1980	Մեծ թայա	4	Գետիկ
27	N 4	Գետիկ	0,026	1	1	1960	Հուշար ծան	2	Գետիկ
28		Արտանիշ	0,830		3	1993	Արտանիշ ²	4	Արտանիշ

29	Գլխավոր ջրամբար	Մարտունի	0,7	30	1,5	1950	Ջերման բուլակ	1/15	Մարտունի	1/15	
30		Դպրաբակ	0,06				Դոպրկա տի աղբյուր	0,8	Դպրաբակ	0,8	
31		Դպրաբակ	0,36				Վերկի աղբյուր	2,0	Դպրաբակ	2,0	
32		Դպրաբակ	0,15				Դաշտից եկող աղբյուր	1,0	Դպրաբակ	1,0	
33		Դպրաբակ	0,13				Ֆերմանե րի վերևի աղբյուր	1,5	Դպրաբակ	1,5	
34	Զրիավաթ 1	Զիլ	0,7	3	1,6	1976	Քարաղբ յուր	12	Զիլ	12	
35	Զրիավաթ 2	Զիլ		27	1,2	1976	Արխաջ	12	Զիլ	12	
36	Կապտաժ 1	Զիլ			1,2	2005		12	Զիլ	12	
37	N 1	Աղբերք	0,144	200	3	1950		1,5	Աղբերք	1,5	
38	N 2	Աղբերք	0,081	150	3	1950		1,0	Աղբերք	1,0	
39	N 3	Աղբերք	0,048	150	3	1952		0,7	Աղբերք	0,7	
40	N 4	Աղբերք	0,046	150	2,5	1960		0,5	Աղբերք	0,5	
41	Վահան	Վահան	1248	200	5	1962	Դարանս դարա	3	Վահան	3	

Հավելված 11
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2016 թ. - ի
N որոշման

ՀՀ Հավելված 11
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2014 թ. մայիսի 22 - ի
N 96 - Ա որոշման

Պ Լ Ա Ն
ՀԱՄԱՃԱՐԱԿՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ԳՈՐԾԵԼՈՒ

Հնարավոր իրավիճակի գնահատում և եզրակացություն՝

Մարզի տարածքում մարդկանց /էպիդեմիկ/, գյուղ կենդանիների /էպիզոոտիկ/ և մշակաբույսերի /էպիֆիտոտիկ/ մոտ հնարավոր է համաճարակների բռնկում:

Հակահամաճարակային համալիր միջոցառումների մշակման և իրագործման , ինչպես նաև իրավիճակի գնահատման համար որոշվում է վարակիչ հիվանդության օջախի սահմանները, որը կարող է լինել վարակիչ հիվանդությամբ հիվանդի տունը, աշխատանքի և սովորելու վայրը, իսկ հատուկ վտանգավոր առանձին վարակիչ հիվանդության ժամանակ հիվանդության օջախ կարող է համարվել նաև հիվանդի բնակության վայրը / գյուղ, քաղաք, թաղամաս և այլն/: Հիվանդի օջախի սահմանները որոշելուց հետո, ձեռնարկվում են համալիր հակահամաճարակային միջոցառումներ՝ հիվանդության օջախի տեղայնացման, հիվանդության հետագա դեպքերի տարածման կանխման և օջախի հետագա վերացման նպատակով:

Հիվանդի մեկուսացումից հետո կատարվում է նրա օջախի /կամ օջախների/ եզրափակիչ ախտահանում, ճշտվում են հիվանդի հետ շփված անձանց ցանկը, ինչպես նաև ճշտվում են մինչև հիվանդանալը, տվյալ հիվանդության առավել գաղտնի շրջանի սահմաններում, ինչ հիվանդների հետ և որտեղ է նա շփվել :

Հիվանդների հետ շփվածները, համայնքների ԲԿԿ-ների բուժաշխատողների կողմից, հիվանդության առավելագույն գաղտնի շրջանի չափով վերցվում են հսկողությական տակ , կատարվում է նրանց ամենօրյա այց, վիճակի գնահատում, նրանց լաբորատոր հետազոտությունների կազմակերպում: Հիվանդության կասկածի դեպքում նրանք նույնպես մեկուսացվում են և նրանց օջախում կատարվում է վերը նշված համալիր հակահամաճարակային միջոցառումները:

Համաճարակային բռնկումները կարող են լինել օդակաթիլային, ջրային, սննդային՝ պայմանավորված հիվանդության փոխանցման և տարածման գործոններով: Համաճարակային բռնկումները բնութագրվում են հիվանդության տարածման գործոնների բնույթով: Հիվանդության տարածման առումով առավել վտանգավոր են օդակաթիլային ճանապարհով՝ աերոգոլների միջոցով փոխանցվող հիվանդությունները / գրիպ, բնական ծաղիկ, թոքերի տուբերկուլյոզ ժանտախտի թոքային ձև, կարմրուկ և այլն/:

Արտակարգ իրավիճակների ժամանակ ՀՀ ԱՆ ՊՀՀՏ Գեղարքունիքի մարզային կենտրոնը, "Մարզային փորձագիտական կենտրոն" ՊՈԱԿ-ը կազմավորում են մարզի դիտարկման և լաբորատոր հսկողության համակարգ /ԴՀՀՀ/: Իրականացնում են հսկողություն արտաքին միջավայրի օբյեկտների , բնակչությանը տրվող խմելու ջրի կենսաբանական միջոցներով վարակվածության նկատմամբ: Այդ նպատակով կազմվում են դիտարկման հետախուզական խմբեր և լաբորատոր ստորաբաժանումներ, դրանք ապահովվում են անհրաժեշտ սարքավորումներով և գույքով: Մարզի դիտարկման և լաբորատոր հսկողության համակարգի հիմնական նպատակներն են.

1. Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումներ իրականացնելիս՝ շրջակա միջավայրի օբյեկտների (հողի, օդի, ջրի, բուսածածկույթի, սննդամթերքի, սննդահումքի, անասնակերի) ռադիոակտիվ, քիմիական ու մանրէաբանական աղտոտվածության օպերատիվ որակական ցուցանշումը (ինդիկացիա),
2. շրջակա միջավայրից վերցված փորձանմուշներում՝ լաբորատոր պայմաններում ռադիոակտիվ, քիմիական նյութերի ու մանրէների քանակի որոշումն ու եզրակացության տրամադրումը
3. մշտական հսկողության արդյունքների հիման վրա ռադիոակտիվ, քիմիական ու վարակիչ հիվանդությունների հարուցիչներից բնակչության պաշտպանության առաջնահերթ միջոցառումների իրականացումը

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման նպատակով , կարանտինի օջախում իրականացվում է սանիտարահիգիենիկ հսկողություն մարդկանց խմելու ջրամատակարարման նկատմամբ: Բնակչության սննդամթերքներով ապահովելու նկատմամբ հսկողությունը պետք է իրականացվի ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդի անվտանգության պետական ծառայության կողմից:

Բնակչության սանիտարական կորուստը բաժանվում է 2 մասի՝ առաջնային սանիտարական կորուստ և երկրորդային սանիտարական կորուստ:

Առաջնային սանիտարական կորուստ է համարվում արտաքին միջավայրում եղած մանրէներով բնակչության վարակումը օդի / մանրէային աերոզոլներով/, խմելու ջրի և սննդամթերքի միջոցով, իսկ երկրորդային սանիտարական կորուստ է համարվում առաջնային սանիտարական կորուստ հանդիսացող հիվանդ մարդկանցից վարակվածները:

1. Ազդարարում

Վարակիչ հիվանդության դեպք արձանագրվելիս, հիվանդին առաջինը տեսած ԲԿԿ-ի բուժաշխատողը / բժիշկ, բուժքույր/ , ՀՀ ԱՆ ՊՀՀՏ Գեղարքունիքի մարզային կենտրոն անմիջապես ներկայացնում է շտապ հաղորդագրություն, նշելով հիվանդի անուն, ազանուն հայրանունը, տարիքը, բնակության հասցեն, կասկածվող վարակիչ հիվանդության անվանումը, հիվանդանալու դատան, հայտնաբերման, կամ դիմելու ամսաթիվը, սկզբնական հակահամաճարակային միջոցառումների իրականացման, հիվանդի մեկուսացման և բուժման կազմակերպման մասին: Շտապ հաղորդագրությունը ստանալուց հետո ՀՀ ԱՆ ՊՀՀՏ Գեղարքունիքի մարզային կենտրոնի համաճարակաբանների կողմից կատարվում է օջախի համաճարակաբանական հետազոտություն և համալիր հակահամաճարակային միջոցառումների կազմակերպում:

2. Բնակչության իրազեկում / վարվելակերպի կանոններ/

ՀՀ ԱՆ ՊՀՀՏ Գեղարքունիքի մարզային կենտրոնի , ՀՀ ԱՆ ՊՀՀՏ “Գեղարքունիքի մարզային ՓԿ” ՊՈԱԿ-ի և ԲԿԿ-ների բժիշկների և բուժքույրերի կողմից հիվանդության օջախներում իրականացվում է լայն քարոզչական աշխատանքներ վարակիչ հիվանդների ժամանակին հայտնաբերման, մեկուսացման , բուժման, ինչպես նաև վարակիչ հիվանդություններով հիվանդանալուց զերծ մնալու միջոցառումների վերաբերյալ:

ՀՀ ԱՆ ՊՀՀՏ Գեղարքունիքի մարզային կենտրոնի կողմից մարզպետարանին ՏԻՄ –երին ներկայացվում է կարանտին սահմանելու մասին առաջարկություն, սահմանվում է հսկողություն վարակիչ հիվանդությունների հարուցիչների նկատմամբ հետազոտություններ իրականացնող գերատեսչական լաբորատորիաների նկատմամբ:

Օջախների տեղայնացման և վերացման նպատակով կազմակերպվում է դրանց եզրափակիչ և ընթացիկ ախտահանման , կրծողների և միջատների ոչնչացման աշխատանքներ:

Կազմակերպվում է վարակիչ հիվանդությունների դեմ բնակչության զանգվածային կանխարգելիչ պատվաստումներ, այդ աշխատանքներում ընդգրկվում են մարզի ԲԿԿ-ների բուժաշխատողները:

Հիվանդների հետ խիստ շփում ունեցող և հիվանդության կասկածելի նշաններ ունեցողները հոսպիտալացվում , հետազոտվում և բուժվում են պրովիզոր հոսպիտալներում :Որպես պրովիզոր հոսպիտալ նախատեսված է օգտագործել մարզի քաղաքներում գտնվող հիվանդանոցների թերապևտիկ բաժանմունքները:

Որպես օբսերվատոր օգտագործվում է կարանտին սահմանված տարածքի դպրոցները, մանկապարտեզները, որտեղ հիվանդության առավելագույն գաղտնի շրջանի ավարտից հետո հիվանդության նշաններ չունեցողներին թույլատրվում է դուրս գալ կարանտինի օջախի սահմաններից:

3. Տարահանման կազմակերպում

Հատուկ վտանգավոր վարակիչ հիվանդության / ժանտախտ,խոլերա, բնական ծաղիկ և այլն/ դեպք արձանագրվելիս, հիվանդին հոսպիտալացնում են մարզի տարածքների քաղաքներում գտնվող հիվանդանոցների ինֆեկցիոն բաժանմունքներում, որոնք արտակարգ իրավիճակների դեպքում գործում են որպես ինֆեկցիոն հոսպիտալներ:

4. Փոխհամագործակցություն

Համաճարակների դեպքում փոխգործողությունները իրականացվում են ծառայությունների, կազմավորումների միջև՝ յուրաքանչյուրի առջև դրված խնդիրների ճշգրիտ ու անվերապահ կատարմամբ, և ստեղծված իրավիճակի վերաբերյալ ձեռք բերված տեղեկատվության՝ ըստ առնչության, միմյանց փոխանցմամբ:

Տվյալներ

Գեղարքունիքի մարզի ճառագայտային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի կազմակերպությունների մասին ըստ գերատեսչական պատկանելիության

ՀՀ Ը/Կ	Կազմակերպություն				Առկա սարքավորումները	Կազմակերպության մասնագիտական հնարավորությունները
	Անվանումը	Տեղակայման վայրը, հեռախոսը	Գերատեսչական պատկանելիությունը	Աշխատող ների թվաքան ակը		
1.	2.	3.	4.	5.	6.	7.
1.	Գավառի հիդրոտեղեկութաբանա- կան կայան	Ք. Գավառ Կաթելագործ- ների 3 /0264/2-68-75	ՀՀ ԱԻՆ հիդրո օդերևութաբանական և մոնիթորինգի պետական ծառայություն	7	Բարոմետր, արևագրիչ, հողմացույց, աներոմետր Մ63, փսիխոմետրական տնակ, անձրևաչափ, խոնավաչափ	Օդի սթ. Ճնշման որոշում, Արևափայլի տևողութ որոշ., Քամու ուղղութայան և արագութայան որոշում Օդի ջերմութայան որոշում, Տեղումների քանակի և ինտենսիւթայան որոշում Օդի բացարձակ հարաբե- րական խոնավութ. որոշում
2.	Մարտունու հիդրոտեղեկութաբանա- կան կայան	Ք. Մարտունի Սայաթ- Նովա 83 0262-4-11-53	ՀՀ ԱԻՆ հիդրո օդերևութաբանական և մոնիթորինգի պետական ծառայութ.	8	Մետրոլոգիական սարքավորում	Մետրոլոգիական դիտարկման համար
3.	Ճամբարակի հիդրոտեղեկութաբանա- կան կայան	Ք. Ճամբարակ Հովհ. Բաղրամյան 30/1 /0265/6-02-10	ՀՀ ԱԻՆ հիդրո օդերևութաբանական և մոնիթորինգի պետական ծառայութ.	5	Օդի ջերմութ չափիչ խոնավաչափիչ քամու արագութայան չափիչ սարք, բարոմետր	Օդի ջերմութայան չափում խոնավութայան որոշում քամու ուղղութայան և արագութայան որոշում
4.	Սևանի հիդրոտեղեկութաբա- նական դիտարան	Նախկյան 1 նրբանցք 2-25-55	ՀՀ ԱԻՆ հիդրո օդերևութաբանական և մոնիթորինգի պետական ծառայութ.	48	Մետրոլոգիական սարքավորում	Մետրոլոգիական դիտարկման համար

5.	ՊՀՀՏ Գեղարքունիքի մարզային փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ	Ք. Մարտունի Շահումյան 11 4-28-65 4-28-65	ՀՀ առողջապահության նախարարություն	60	Թերմոստատ, ավտոկլավ, թորման ապարատ	Մանրէաբանական և քիմիական հետազոտման անցկացում
6.	ՊՀՀՏ Գեղարքունիքի մարզային փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ Սևանի մասնաճյուղ	Ք. Սևան Նաիրյան 169 2-56-49 2-57-91	ՀՀ առողջապահության նախարարություն	28	-	-
7.	ՊՀՀՏ Գեղարքունիքի մարզային փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ Ճամբարակի մասնաճյուղ	Ք. Ճամբարակ Տիգրան Մեծի 5 /0265/2-24-86	ՀՀ առողջապահության նախարարություն	29	Ավտոկլավ, Թերմոստատ, չորացնող պահարան, ցենտրոֆուգ, սառնարան բակտերիոցիտ լամպ, մանրադիտակ, թորման ապարատ	Մանրէաբանական և քիմիական հետազոտման անցկացում
8.	ՊՀՀՏ Գեղարքունիքի մարզային փորձագիտական կենտրոն Վարդենիսի բաժանմունք	Ք. Վարդենիս Վ. Համբարձումյան 94 /269/ 2-26-51	ՀՀ առողջապահության նախարարություն	1	-	-
9.	ՊՀՀՏ Գեղարքունիքի մարզային փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ Գավառի մասնաճյուղ	Ք. Գավառ Նալբանդյան 107 /0264/2-20-30	ՀՀ առողջապահության նախարարություն	29	Ախտորոշիչ սարքավորումների	Մանրէաբանական և քիմիական հետազոտման անցկացում
10.	<Հայ Զրմուղկություն> ՓԲԸ հարավ տարածքային մասնաճյուղ Սևանի տեղամաս	Ք. Սևան Չարենցի 20	Զրային պետական կոմիտե	42	-	-

11.	Հայ Զրմուկությունի ֆԲԸ հարավ տարածքային մասնաճյուղ Գավառի տեղամաս	Ք. Գավառ Դաշտոյան 25 /0264/ 2-27-54	Զրային պետական կոմիտե	62	Զրի քլորացման սարք ՖԱլորու՝, ՖԼնի 100՝	Զրի քլորացում
12.	Հայ Զրմուկությունի ֆԲԸ հարավ տարածքային մասնաճյուղ Մարտունու ենթատեղամաս	Ք. Մարտունի Գ. Նժդեհի 3 /0262/ 4-07-30	Զրային պետական կոմիտե	20	Զրի քլորացման սարք ՖԱլորու՝,	Զրի քլորացում
